

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

*Անցյալում անհամար վիշտ ու դառնություն տեսած բազմաչարչար հայ ժողովրդի համար չի եղել նվիրական ավելի բարձր երազանք, քան տեվական խաղաղությունը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ հնագույն եկեղեցիներից մեկն է աշխարհում, մշտապես աղոթել է աշխարհի խաղաղության եվ մարդկանց բարօրության համար:*

*Քաղաքական ներկա խառնակ իրադրության մեջ, երբ մարդկությունը կանգնած է միլիոնավոր նոր զոհեր կլանող համաշխարհային նոր պատերազմի սպառնալիքի մղձավանջի առաջ, Հայոց Եկեղեցին՝ հավատարիմ իր ավանդական սկզբունքին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին եվ անվերապահ միանում է Խաղաղության Կողմնակիցների Համաշխարհային Վեհաժողովի Մշտական Կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի բանաձեվերին:*

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ**

12-ին ապրիլի 1950 թ.
Ս. Էջմիածին